## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

25 հոկտեմբերի 2012թ. թիվ 519

## ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1996թ. մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության կարգը հաստատելու մասին» թիվ 147 որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.5 կետի «ժբ» ենթակետով՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Մարզային ենթակայության կազմակերպություններում ս/թ նոյեմբերի 1-ից 30-ը անցկացնել 2012թ. տարեվերջյան գույքագրումներ:

2. Գույքագրման արդյունքների հավաստիության, ճիշտ և ժամանակին կատարման պատասխանատվությունը դնել կազմակերպությունների ղեկավարների վրա:

3. Գույքագրումների կատարման վերահսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան վարչությունների վրա:

4. Գույքագրման արդյունքները ներկայացնել մարզպետարան մինչև ս/թ դեկտեմբերի 10-ը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 25
ք.Վանաձոր